

Ձեր յարգելի ուշադրութեան կը յանձնենք խմբագրական եւ աշխատանքային կարելոր կէտեր, որպէս մասնակցութեան պայմաններ եւ իրաւունքներ:-

1. «Նարօտ» Պարբերաթերթը կը տարբերի մեզի ծանօթ թերթերէն՝ քանի որ կը հրատարակուի միայն ելեկտրոնային դրութեամբ: Հետեւաբար, մատչելի է համայն մարդկութեան այն խաւին՝ որ կրնայ կարդալ ու հասկնալ Հայերէն գրութիւն մը: Այս պարբերաթերթը ճրի պիտի հրամցուի կայքէջը այցելողին, որմէ փափաքածը կրնայ իջեցնել իր համակարգիչին մէջ եւ նոյնիսկ իր ձեռքի հեռաձայնին մէջ, հետագային կարդալու համար եւ կամ ուսումնասիրութիւն կատարելու համար: Այսպէս, հեղինակին համար, սքանչելի առիթ մը կը ստեղծուի համայն աշխարհին հետ հաղորդակցելու:
2. «Նարօտ»ին յանձնուելիք յօդուածները ունենալու են, առաւելագոյն, տասը (10) տողնոց ամփոփում մը, ուր հեղինակը կը ներկայացնէ յօդուածին միտք բանին:
3. «Նարօտ»ին խմբագիրները կը յանձնեն յօդուածները գլխաւոր խմբագիրին, որ իր կարգին, եթէ հարկ ըլլայ, պիտի մատնանշէ սրբագրութիւններ, փոփոխութիւններ եւ նկատումներ: Իւրաքանչիւր յօդուած անպայման կրնայ չկարօտիլ սրբագրութեան, սակայն առ հասարակ կը վերանայուի, որպէսզի «Նարօտ»ին որակը կարելիին չափ պահուի բարձր, գնահատելի ու մատչելի բոլորին:
4. «Նարօտ»ի բոլոր յօդուածագիրները իրաւասութիւն ունին ետ քաշելու իրենց յօդուածը հրատարակումի ժամկէտէն առաջ (տե՛ս թիւ 5):
5. «Նարօտ»ը կը հրատարակուի երրորդ ամսուան չորրորդ շաբաթը՝ որպէսզի տրամադրելի ըլլայ հանրութեան՝ կայքէջի վրայ, յաջորդող/նոր ամսուան առաջին օրը:
6. «Նարօտ»ը առժամաբար պիտի հրատարակուի եռամսեայ դրութեամբ:
7. Յօդուածները «Նարօտ»ին յանձնելու ժամկէտը եռամսեայի առաջին ամսուան երկրորդ Ուրբաթ օրն է: Անկէ ետք ստացուած յօդուած մը պիտի նախատեսուի լոյս տեսնել յաջորդ թիւին մէջ:
8. «Նարօտ»ին յղուած յօդուածները պիտի ունենան երեք պատասխաններէն մին, որ պիտի տեղեկացուի յօդուածագիրին ենամակով մը.

ա. Ընդունուած - կը նշանակէ հրատարակուելու ընդուն-

ուած է:

բ. Առկախ - կը նշանակէ տակաւին կարողացուած չէ յօդուածը:

գ. Մերժուած - կը նշանակէ պիտի չհրատարակուի եւ յօդուածագիրը ազատ է դրկելու զայն իր ուզած թերթին:

9. «Նարօտ»ը կը հրատարակուի դասական ուղղագրութեամբ:

10. «Նարօտ»ի յղուած յօդուածները ըլլալու են 8.5" x 11" էջի չափով, տառատեսակի չափ՝ 12pt.:

11. «Նարօտ»ի բոլոր յօդուածագիրներէն կը խնդրուի, որ յանձնեն իրենց յօդուածները ենամակով, մեքենագրուած:

12. Ելեկտրոնային առաքումներու համար, մեքենագրութիւնները ըլլալու են Unicode Հայերէն տառատեսակով:

13. Յօդուածներու մէջ յիշուած բոլոր անհատներու անունները գրուելու են լրիւ, այսինքն՝ ամբողջական անունն ու մականունը.

օրինակ՝ Ներսէս Պոյաճեան, եւ ո՛չ՝ Ն. Պոյաճեան:

14. Կը պահանջուի հեղինակին գրական կենսագրութիւնը եւ նոր լուսանկար մը:

15. Յօդուածներու մէջ գործածուելիք դարերու թուարկումները ըլլալու են հետեւեալ կերպով.

ա. Ա. դար, Բ. դար, Ա-Գ դարեր

բ. Բ.Ա. (Քրիստոսէ առաջ, եւ ո՛չ թէ մ.թ.ա.,  
մեր թուականէն առաջ)

գ. Բ.Ե. (Քրիստոսէ ետք [յետոյ], եւ ո՛չ թէ մ.թ.,  
մեր թուականին)

դ. Սեպտեմբեր 5, 2013 (եւ ո՛չ թէ 5,9,2013  
կամ 5 Սեպտեմբեր 2013)

16. Հեղինակին պատասխանատուութիւնն է եւ պարտականութիւնը, ապահովելու մէջբերումի, վկայակոչումի եւ յատուկ լուսանկարներու գործածութեան իրաւունքը:

17. Լուսանկարներու ներքեւ տեղադրելիք տեղեկութիւնները մաս կը կազմեն հեղինակին պատասխանատուութեան:

18. Օտար լեզուով բոլոր բառերը եւ մէջբերումները թարգմանուելու են Հայերէնի եւ յօդուածին վերջաւորութեան (endnote) ներկայացնել բնագիրը:

19. Ծանօթագրութիւնները եւ բոլոր աղբիւրները յիշատակուելու են յօդուածի վերջաւորութեան (endnotes): Նաեւ, յօդուածին վերջաւորութեան ունենալ օգտագործուած աղբիւրներու ցանկը, լրիւ ցանկագրութեամբ, ըստ սովորութեան:

20. Օտար անունները պիտի գրուին նախ՝ Հայերէն տառադարձութեամբ եւ ապա՝ ճիշտ կողքին՝ փակագծի մէջ՝ անգլիատառ. օրինակ՝ Ջեյմստաուն (Jamestown): Իսկ Հայերէնի տառադարձութիւնը՝ լատինատառ այբուբենի, «Նարօտ»ը պիտի հետեւի հետեւեալ դրութեան.

- Աա      Ââ (as in fAther)
- Բբ      Bb (as in BaBy)
- Գգ      Gg (as in GreGory)
- Դդ      Dd (as in DaviD)
- Եե      Ęę (as in Egg)
- Զզ      Zz (as in Zebra)
- Էէ      Āā (as in essAY)
- Ըը      Ūū (as in fathEr)
- Թթ      Þþ (as in THorn)
- Ժժ      Žž (as in aZure)
- Իի      Ii (as in EAch, or mEEt)
- Լլ      Ll (as in LiLy)
- Խխ      Ķķ (as in baCH, as guttural ch in German)
- Ծծ      Çç (as in moZart, in German)
- Կկ      Kk (as in miCKy)
- Հհ      Hh (as in House)
- Զձ      Zz (as in kiDS)
- Դը      Ğğ (as in paRis, as guttural in French)
- Ճճ      Ćć (like a hard clipped ‘j’ )
- Մմ      Mm (as in Mother)
- ԅյ      Yy (as in Yemen)
- Նն      Nn (as in New)
- Շշ      Šš (as in SHerman)
- Ոո      Ōō (as in OntOIology)
- Զչ      Čč (as in CHurCH)
- Պպ      Pp (as in Peter)
- Զջ      Ĝĝ (as in James)
- Ռռ      Řř (as in RRasputin, or the rolled Spanish ‘r’)
- Սս      Śś (As in Sand)
- Վվ      Vv (as in Victor)
- Տտ      Tt (as in TiTans)
- Րր      Rr (as in RiveR)
- Յց      Şş (as in neTS)
- Իւ      Uu (as in cOOl)

- Փփ Ff (as in PHiladelPHia)
- Զք Xx (as in Christ)
- Օօ Ôô (as in AUtomobile)
- Ֆֆ Ff (as in liFe)
- Ա &

«Նարոս»ը կ'ընդունվի գրական բոլոր ոլորտներու պատկանող յօդուածները՝ արձակ, բանաստեղծութիւն, պատմական եւ գրական ուսումնասիրութիւն, վերլուծում, գիրքի քննարկում (book review), ելլն.:

«Նարոս»ը պատրաստ է ընդունելու աշխատանքային հետեւեալ ընդհանուր միւթերը.

Ազգագրական մշակոյթ (Ethnographic culture)

Ազգեր յիշատակուած Աստուածաշունչ Մատեանին մէջ (Nations mentioned in the Bible)

Անձնաւորութիւններ, որոնք ձեւափոխեցին պատմութեան ընթացքը (Individuals that transformed [or affected on] the course of history)

Աշխարհի գեղարուեստը (The fine arts of the world)

Աշխարհի գիտերն ու գիտարարները (The world's inventions and the inventors)

Բանաստեղծութիւն (Poetry)

Բժշկութեան պատմութիւն (History of medicine)

Եկեղեցական պատմութիւն (Church history)

Երաժշտութեան պատմութիւն (History of music)

Թուաբանութեան աշխարհն ու հրաշալիքները (The world and wonder of mathematics)

Իմաստասիրութեան պատմութիւն (History of philosophy)

Կրօնքներու պատմութիւն (History of religions)

Համակարգիչի պատմութիւն (History of the computer)

Հայ ազգաբանութիւն (Armenian ethnology)

Հայ ասեղնագործութիւն (Armenian embroidery, needle work)

Հայ գորգարուեստ (Armenian Carpet)

Հայ գրականութեան պատմութիւն (History of Armenian literature)

Հայ դասական պատմիչներ եւ Հայկական ինքնութիւն (Armenian historians and Armenian identity)

Հայ դաստիարակութեան պատմութիւն (History of Armenian education)

Հայ եկեղեցական պատմութիւն (Armenian church history)

- Հայ երաժշտութեան պատմութիւն (History of Armenian music)
- Հայ ժողովուրդի պատմութիւն (Armenian history)
- Հայ իմաստասիրութեան պատմութիւն (History of Armenian philosophy)
- Հայ ծէս (Armenian liturgy)
- Հայ հայրաբանութիւն (Armenian patrology)
- Հայ հեթանոսական մշակոյթ (Armenian pagan culture)
- Հայ մետաղագործութիւն՝ ոսկերչութիւն, արծաթագործութիւն, պղնձագործութիւն (Armenian Metal work: gold, silver, bronze)
- Հայ վանականութեան պատմութիւն (History of Armenian monasticism)
- Հայերէն լեզու (Armenian language)
- Հայկական գեղարուեստ (Armenian fine art)
- Հայկական դրամագիտութիւն (Armenian numismatics)
- Հայկական կաւագործութիւն (Armenian pottery)
- Հայկական ձեռագիրներ եւ մանրանկարչութիւն (Armenian manuscripts and miniature paintings)
- Հայկական ճարտարապետութիւն (Armenian architecture)
- Հայկական յախճապակի (Armenian ceramics)
- Հոգեբանութիւն (Psychology)
- Հոգեբուժութիւն (Psychiatry, psychotherapy)
- Հոգեվերլուծութիւն (Psychoanalysis)
- Մանկավարժութիւն (Pedagogy)
- Յեղափոխական շարժումներու պատմութիւն (History of revolutionary movements)
- Նիւթեր Աստուածաշունչ Մատեանէն (Topics/Subjects from the Bible)
- Սուրբգրային Աստուածաբանութիւն (Biblical Theology)
- Քաղաքագիտութիւն (Political science)

Աշխատակիցը կրնայ այս ընդհանուր նիւթերէն ընտրել ո՛րեւէ մէկը, կամ մէկէ աւելին, իր հմտութեան համաձայն, Հայ ընթերցողին ներկայացնելու որակաւոր աշխատանք մը: